

Շրջակա միջավայրի նախարարության  
գլխավոր քարտուղար  
պարոն Գրիգոր Գուլյանին

## **Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ Կարեն  
Հովհաննիսյանի 2023 թվականի հունիսի 4-10-ը Թաիլանդի Թագավորություն  
գործուղման արդյունքների վերաբերյալ**

### **1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Կարեն Հովհաննիսյան

### **2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ

### **3. ԳՈՐԾՈՂԻՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Թաիլանդի Թագավորություն (ք. Բանգկոկ),  
2023 թվականի հունիսի 4-10-ը

### **4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Միավորված ազգերի կազմակերպության Ասիա-խաղաղօվկիանոսյան  
տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP)  
քարտուղարություն

### **5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն արտադրողների և օգտագործողների համար աղետների հետ  
կապված վիճակագրության փորձագիտական երրորդ ֆորումին և հարակից  
միջոցառումներին:

### **6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հանդիպման նպատակն էր քննարկել և կիսվել երկրների փորձով աղետների հետ  
կապված վիճակագրության արտադրության ոլորտում՝ նպատակ ունենալով  
բացահայտել լավագույն փորձը և վերարտադրման հնարավորությունները:

Քննարկել և կիսվել երկրների փորձով աղետների հետ կապված վիճակագրության  
օգտագործման ոլորտում՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային և գլոբալ  
պարտավորությունները դիտարկելու կամ ռիսկերի վրա հիմնված զարգացումը  
նուղորդելու համար:

Միջոցառմանը մասնկացում էին 20 երկրի և 7 միջազգային կազմակերպությունների  
60-ից ավել ներկայացուցիչներ, իսկ օնլայն հարթակում հանդիպմանը մասնակցում  
էին ավելի քան 120 ներկայացուցիչներ:

Ֆորումն անցկացվում էր հիբրիդային ձևաչափով և ընթացավ 9 նստաշրջաններով:

- 1-ին նիստ՝ նիստի նպատակը և հիմնական հարցերը:

Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ աղետների հետ կապված ավելի լավ վիճակագրություն: Ինչպե՞ս է այս Փորձագիտական ֆորումը նպաստում աղետների հետ կապված վիճակագրության որակի բարելավմանն ուղղված համաշխարհային, տարածաշրջանային և ազգային ջանքերին:

Յուրքանջյուր տարածաշրջան ներկայացրեց իր կարիքներն ու առաջնահերթությունները աղետների հետ կապված վիճակագրության գործընթացքում՝ նախանշելով առկա բացերն ու դրանց լուծման համար հնարավոր ելքերը:

- 2-րդ նստաշրջանը վերաբերում էր ռիսկի ազդեցության, խոցելիության և դիմակայելու կարողությունների գնահատման և քարտեզագրման հարցերին: Քննարկված հարցերն էին. ինչպես կարող է տեխնոլոգիան օգտագործվել տվյալների հավաքագրման և աղետների հետևանքների վերաբերյալ հաշվետվությունների բարելավման համար, որո՞նք են աղետների հետ կապված վիճակագրությունը այս տեխնոլոգիաների հետ որոշումների կայացման մեջ ինտեգրելու մարտահրավերները:

Նստաշրջանի ընթացքում քննարկվեցին, թե ինչպես կարելի է օգտագործել զարգացող միտումները և նոր տեխնոլոգիաները՝ աղետների հետ կապված տվյալները հավաքագրելու և վերլուծելու համար՝ գնահատելու ազդեցությունը, խոցելիությունը և դրա հետ գործ ունենալու կարողությունը՝ դրանով իսկ բարելավելով աղետների պլանավորումը և դրանց արձագանքման ջանքերը:

- 3-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեցին վտանգների և աղետների դասակարգման և ներդաշնակեցման խնդիրները: Նիստի նպատակն էր խորացնել ըմբռնումը և գիտելիքների փոխանակումը վտանգների և բնական աղետների ստանդարտացված դասակարգումների մշակման ընթացիկ աշխատանքների վերաբերյալ՝ տարբեր տարածաշրջաններում և երկրներում տվյալների հավաքագրումը, վերլուծությունն ու համեմատությունը հեշտացնելու և աղետների հետ կապված տեղեկատվության ճշգրտությունն ու հետևողականությունը բարելավելու համար:

- 4-րդ նստաշրջանը վերնագրված էր Աղետների ուղղակի և անուղղակի ազդեցությունների սահմանում: Այս նիստի նպատակն էր անդրադառնալ աղետների ուղղակի և անուղղակի ազդեցությունների շրջանակի և չափման հարցերին, ներառյալ հետաձգված և անուղղակի ազդեցությունները, ինչպես նաև դանդաղ սկսվող աղետների ազդեցությունների չափումը: Նիստի ընթացքում քննարկվել են նաև Կորուստների և Վնասների ֆինանսավորման մեխանիզմները կլիմայի փոփոխության և աղետների հետ կապված վիճակագրության վերաբերյալ ինչպես օգտագործողների, այնպես էլ արտադրողների տեսանկյունից:

- 5-րդ նստաշրջանն էր՝ Աղետների ազդեցության չափումը մարդկային գործոններով պայմանավորված: Նստաշրջանի նպատակն էր աղետների մարդկային ազդեցությունների չափման, մահվան, բնակչության տեղաշարժերի և միգրացիայի վերաբերյալ տվյալների հաղորդման ճշգրտության բարելավումը՝ հաշվի առնելով նաև գենդերային նկատառումները:

- 6-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեցին շրջակա միջավայրի և մշակութային ժառանգության վրա աղետների ազդեցության չափման հարցերը: Մասնավորապես քննարկվեցին բնապահպանական տնտեսական հաշվառման համակարգը և այն չափը, որով այն արտացոլում է աղետների ազդեցությունները, աղետից հետո տվյալների և տեղեկատվության հավաքագրման համար աշխարհատարածական տեղեկատվության օգտագործումը, ինչպես նաև աղետների պատճառով մշակութային ժառանգությանը հասցվող կորուստների գնահատումը:
- 7-րդ նստաշրջանը վերնագրված էր աղետներից ուղղակի նյութական ազդեցության և տնտեսական կորուստների գնահատումը: Նստաշրջանի նպատակն էր նպաստել երկրների գիտելիքներին և փորձին աղետների հետևանքով ուղղակի տնտեսական կորուստների միջազգայնորեն համադրելի միջոցառումների իրականացման համար, վերանայել և հասկանալ քաղաքականության անհրաժեշտությունը՝ աղետների հետ կապված տնտեսական կորուստների վերաբերյալ տեղեկատվության բարելավման համար, աղետներից ուղղակի տնտեսական կորուստների գնահատման հետ կապված հարցերում երկրի ներկայիս փորձի և մարտահրավերների փոխանակումը:
- 8-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեցին աղետների ռիսկի նվազեցման ծախսերի հաշվառման հարցերը: Այս նստաշրջանի նպատակն էր տեղեկացնել և առաջ տանել միջգերատեսչական և փորձագիտական խմբի (IAEG) քննարկումը աղետների ռիսկի նվազեցման ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և օգտագործման հետ կապված փորձի և մարտահրավերների փոխանակման միջոցով և քննարկել, թե ինչպես կարող են հետագայում զարգանալ աղետների ռիսկերի նվազեցման ծախսերի հաշվարկման մեխանիզմները:
- 9-րդ նստաշրջանը նվիրված էր եռօրյա ֆորումի ամփոփմանն և եզրակացությանը՝ ի մի բերելու համար ֆորումի կարևորագույն իրադարձություններն ու արդյունքները և նախանշելու առաջնահերթ հաջորդ քայլերը:

Եռօրյա ֆորումին հաջորդեցին երկօրյա հարակից հանդիպումները, որի ընթացքում քննարկվեցին Վնասների և Կորուստների (Damages and Losses) համակարգի ներդրման անհրաժեշտությունը երկրների համար, դրա առավելություններն ու առանձնահատկությունները: Այս համակարգի հիմնական ուղենիշներից մեկը «DesInventar»-ն է, որը գործում է 1994 թվականից և սպասարկում է ՄԱԿ-ի 110 անդամ պետություն: Հանդիպման ընթացքում խորհուրդ է տրվել կառուցել այս համակարգը՝ միաժամանակ ապահովելով, որ նոր սերնդի համակարգը փոխգործունակ ու համատեղելի է, համապատասխանում է երկրների տվյալների և թվային հասունության մակարդակին, արտադրում է տարանջատված տեղեկատվություն և կարող է հետևել վտանգավոր իրադարձություններին, կորուստներին ու վնասներին տեղայնացված մասշտաբներով և շարունակական հիմունքներով:

Այս ենթատեսքստում անդրադառնալով զարգացվածության տարբեր մակարդակ ունեցող երկրների վրա կլիմայական փոփոխության ազդեցությանը, Հայաստանի Հանրապետությունը բազմիցս, տարբեր հարթակներում կարևորել է «Վնասների և կորուստների» հիմնադրամի ստեղծումը, որի հիմնական նպատակը ֆինանսական

աջակցության տրամադրումն է կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երկրների կրած վնասները, կորուստները վերականգնելու համար:

Հանդիպման հաջորդ խորագիրն էր Աղետների ռիսկերի հետ կապված վիճակագրության և ցուցիչների միջոցով դիմակայունության ձևավորումը: Ընդհանուր նպատակն էր մշակել աղետների վտանգի հետ կապված ցուցիչների հիմնական խումբ, որը կարող է առաջարկվել ԱՎԾ-ների կողմից կանոնավոր արտադրության համար այնքանով, որքանով դրանք օգտակար են համարվում, քանի որ դրանք՝ ամրապնդում են աղետների ռիսկի վերաբերյալ փաստական տվյալները, աղետների ռիսկի վիճակի մասին տեղեկացնում են միջազգային մակարդակով համադրելի եղանակով, աջակցում են միջազգային քաղաքականության համաձայնագրերի մոնիտորինգին և հաշվետվություններին, ապահովում են տեղեկատվության հետևողականությունն ու համահունչությունը վարչական սահմաններում և բարձրացնում են գոյություն ունեցող վիճակագրության արժեքը:

Սեմինարը հնարավորություն ընձեռեց տարբեր ազգային և միջազգային շահագրգիռ կողմերին վերլուծելու աղետների հետ կապված վիճակագրության շրջանակի (DRSF) գործնական իրականացումը և տրամադրելու իրենց կարծիքը: Հիմնական նպատակներից էր տրամադրել առաջարկություններ և գործնական քայլեր աղետների ռիսկերի նվազեցման ցուցանիշների և վիճակագրության ներդրման ուղղությամբ՝ օգնելով բարձրացնել դիմակայունությունը և նվազեցնել վտանգավոր իրադարձությունների և բնական աղետների ազդեցությունը:

Հարակից հանդիպումների վերջին խորագիրն էր Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մարտահրավերների, կարիքների և հնարավորությունների գնահատումը կլիմայի փոփոխության և աղետների հետ կապված վիճակագրության առաջխաղացման գործում:

Այս հանդիպման նպատակն էր օգնել բարձրացնել երկրների ազգային վիճակագրական համակարգերի կայունությունն ու օպերատիվությունը՝ ճգնաժամերի և բնական աղետների ժամանակ առաջացող տնտեսական, սոցիալական և բնապահպանական տվյալների պահանջները բավարարելու համար՝ օգտագործելով տվյալների նորարարական աղբյուրներ, տվյալների հավաքագրման առաջատար մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ֆորումից առաջ յուրաքանչյուր երկիր լրացրել էր ազգային հարցարան՝ երկրի առաջնահերթությունների և կարիքների գնահատման նպատակով, որում նշվել էին հիմնական մարտահրավերներն ու բացերը, որոնք ունեն երկրները: Հայաստանի Հանրապետության համար որպես հիմնական մարտահրավերներ նշվել էին՝

- աղետների մասին տեղեկատվության կառավարման անբավարար համակարգը և տվյալների պակասը (հատկապես ՏԻՄ մակարդակում),
- ներգրավված հաստատությունների միջև կլիմայի գործողությունների համակարգման բացակայությունը,
- վնասների և կորուստների վերաբերյալ համապատասխան տվյալների բացակայությունը,
- տարածական տվյալների և հեռակառավարման տեխնոլոգիաների սահմանափակ օգտագործումը,

- վաղ նախազգուշացման ազգային համակարգի բացակայությունը (թերի լինելը),
- ռիսկերի գնահատման և մոնիտորինգի պաշտոնապես ընդունված ընթացակարգերի և իրավաբանորեն պարտադիր պահանջների բացակայությունը,
- բնակչության մեծամասնության ցածր եկամուտները, տնտեսական շրջափակումը և համեմատաբար ցածր ներդրումները, որոնք սահմանափակում են տնտեսական աճը և նպաստում աղետների խոցելիությանը,
- միջկառավարական հաստատությունների միջև հաղորդակցության թերի լինելը:

## **7. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Եռօրյա ֆորումի և հարակից միջոցառումների արդյունքում երկրներն առավել մանրամասն նախանշեցին իրենց կարիքներն ու առաջնահերթությունները աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրությունում, կիսվեցին երկրների հաջող փորձերով ու մոտեցումներով:

Միջոցառման այցելության հետ կապված ծախսերը ֆինանսավորել էր ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը (UN ESCAP):

Ֆորումի և հարակից միջոցառումների մասին ամփոփ տեղեկատվությունը տեղադրված է հետևյալ կայքում՝

<https://www.unescap.org/events/2023/third-expert-forum-producers-and-users-disaster-related-statistics>

Միջազգային համագործակցության  
վարչության գլխավոր մասնագետ՝



Կարեն Հովհաննիսյան  
13.06.2023թ.